



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԴԱՍ 5



ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

«Չեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:



ԴԱՍ 5

ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԱՏԱՐՎՈՂ ՍԵՔՍՈՒԱԼ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ




ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով
ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն
այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ



Տեսանյութն ուշադրությամբ
ուսումնասիրելու համար անհրաժեշտ է
մոտ 5 րոպե:



Ուշադրությամբ
կարդացեք դասի
տեսական մասը՝
օգտվելով բառարանից,
և այն յուրացնելուց հետո
միայն պատասխանեք
ինքնաստուգիչ
հարցերին:
Այս աշխատանքների
համար անհրաժեշտ է
մոտ 205 րոպե:

Ե

րեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (1) 19-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

- 1 Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:
- 2 Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դա-

ժան վերաբերմունքի՝ վերը նշված դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու, և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության՝ դատական գործ հարուցելու համար:

Նույն կոնվենցիայի 34-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն.

- 1 երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,
- 2 շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,
- 3 շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

Զարգացնելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով սահմանված դրույթները՝ ԵԽ-ն 2007 թ.-ի հոկտեմբերի 25-ին ընդունեց Լանցարտեի՝ Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին կոնվենցիան (2), որի առաջնային նպատակներն են՝

- 1 կանխարգելել և պայքարել երեխաների սեռական շահագործման և նրանց հանդեպ սեռական բռնության դեմ,
- 2 պաշտպանել սեռական շահագործումից և սեռական բռնությունից տուժած երեխաների իրավունքները:

Երեխաների հանդեպ սեքսուալ ոտնձգությունների կանխարգելմանն ուղղված դրույթներ է



Ծանոթացեք ոլորտային կոնվենցիաներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով կարգավորումների առանձնահատկություններին:

պարունակում նաև Ստամբուլյան՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, որը դեռևս նախարանում շեշտում է ընտանեկան բռնության, սեռական հետապնդման, բռնաբարության, հարկադիր ամուսնության, կանանց սեռական օրգանների խեղման կանխարգելման անհրաժեշտությունը, իսկ կոնվենցիոնալ դրույթների շարադրման ընթացքում նաև կարևորում է այս արարքների կատարման համար քրեական պատասխանատվության նախատեսման պարտադիր բնույթը:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (3) անդրադառնում է մարդկանց թրաֆիքինգին, կարևորում դրա քրեականացման անհրաժեշտությունը հատկապես 18 տարին չլրացած երեխաների պարագայում՝ որպես հանցագործություն դիտարկելով շահագործման նպատակով նրանց հավաքագրելը, փոխադրելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, նույնիսկ երբ նրանց համաձայնությունն ստանալու համար չեն կիրառվել հարկադրանք, ուժ, խաբեություն կամ իշխանության չարաշահում:

Բուդապեշտի՝ Կիրեռհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (4) 9-րդ հոդվածը պետություններից պահանջում է քրեականացնել մանկական պոռնոգրաֆիայի արտադրությունը՝ համակարգչային համակարգի միջոցով տարածելու նպատակով, մանկական պոռնոգրաֆիայի առաջարկումը կամ մատչելի դարձնելը կամ տարածումը կամ փոխանցումը համակարգչային համակարգի միջոցով, մանկական պոռնոգրաֆիայի հայթայթումը համակարգչային համակարգի միջոցով՝ իր կամ մեկ այլ անձի համար, մանկական պոռնոգրաֆիային տիրապետումը համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում:

Երեխաների հանդեպ կատարվող սեքսուալ հանցագործությունների առավել մանրակրկիտ բնութագիր տրվում է Լանցարոտեի կոնվենցիայով: Քննարկվող կոնվենցիան նախատեսում է մի շարք արարքների պարտադիր քրեականացման պահանջ, որոնք տեղ են գտել նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքում, ինչպես նաև 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում (5):

Մասնավորապես՝ Լանցարտտեի կոնվենցիայի 18-23-րդ հոդվածները սահմանում են, թե որ արարքները պետք է դիտարկվեն որպես հանցագործություն, այն է՝ սեռական բռնությունը, մարմնական մարմնավաճառության կամ պոռնոգրաֆիայի հետ կապված հանցանքները, անատակաբարո գործողությունները:

ՀՀ գործող քրեական օրենսգիրքը՝ Լանցարտտեի կոնվենցիայի պահանջներին համապատասխան, քրեականացրել է անչափահասների նկատմամբ սեռական բռնությունը՝ քրեական պատասխանատվություն սահմանելով ինչպես բռնաբարության, այնպես էլ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների համար:

Մասնավորապես՝ Լանցարտտեի կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է համարում քրեականացնել՝

- 1 այն երեխայի հետ սեքսուալ բնույթի գործողությունների մեջ ներգրավվելը, որը, ազգային իրավունքի համապատասխան դրույթների համաձայն, չի հասել սեքսուալ բնույթի գործողությունների համար օրենքով սահմանված տարիքին,
- 2 երեխայի հետ սեռական բնույթի գործողություններով զբաղվելը, երբ՝
 - կիրառվում են հարկադրանք, ուժ կամ սպառնալիքներ, կամ
 - տեղ է գտնում երեխայի նկատմամբ ունեցած վստահության, իշխանության կամ ազդեցության չարաշահում, այդ թվում և ընտանիքի ներսում, կամ
 - չարաշահվում է երեխայի առանձնապես անպաշտպան վիճակը, մասնավորապես սահմանափակ մտավոր կամ ֆիզիկական ունակությունների կամ կախվածության մեջ գտնվելու հանգամանքներում:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 138-րդ և 139-րդ հոդվածների դիսպոզիցիաների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը քրեական պատասխանատվություն է սահմանում սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների համար, որոնք կատարվել են տուժողի կամքին հակառակ՝ նրա կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

Ընդ որում, օրենսդիրը հստակեցնում է, որ անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, որը որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակա-

վորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը:

Ծանոթացեք
օրենսդրական
փոփոխություններին:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում այս երկու հանգակագմերը միավորվել են և քրեական պատասխանատվություն է սահմանվել սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքները բավարարելու համար, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամ քին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով: Ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքի տարբերակում շեշտադրում է կատարվել ոչ միայն տուժած անձի կամ քին հակառակ գործելու, այլ նրա կամքն անտեսելու վրա, ինչն ուղղակիորեն բխում է նաև Ստամբուլյան կոնվենցիայի պահանջներից:

Թե՛ գործող քրեական օրենսգրքը, թե՛ ՀՀ նոր քրեական օրենսգրքն առավել խիստ պատասխանատվություն են սահմանում սեռական բռնության այն դրսևորումների համար, որոնք կատարվել են անչափահասների նկատմամբ կամ ընտանիքի անդամների կողմից:

Մասնավորապես, ՀՀ գործող քրեական օրենսգրքում թե՛ բռնաբարության և թե՛ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների ծանրացնող հանգամանք է դիտարկվում հանցանքի կատարումն անչափահասի, իսկ առավել ծանրացնող հանգամանք՝ դրա կատարումը՝

1) տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն,

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքում վերոնշյալ ծանրացնող հանգամանքները նույնպես ամրագրվել են, սակայն առկա ձևակերպումներում որոշակի խնդրահարույց մոտեցումներ են սահմանվել: Մասնավորապես, նշված օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում սեքսուալ բնույթի բռնի գործողությունների համար, որոնք կատարվել են՝ «...

2) անչափահասի նկատմամբ,

3) մերձավոր ազգականի կամ զուգրնկերոջ

կամ նախկին զուգրնկերոջ կողմից,

4) ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,...»:

Ծանոթացեք օրենսդրական նորամուծությանը:

Նույն հոդվածի 3-րդ մասում, որպես առավել ծանրացնող հանգամանքներ են դիտարկվում հանցանքի կատարումը՝

«1) 18 տարին չլրացած անձի նկատմամբ վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն,

2) 12-ից 14 տարին չլրացած անձի նկատմամբ...»:

Ներկայացված դրույթների համադրումից հետևում է, որ եթե ոտնձգությունը կատարվում է 12-14 տարեկան անձի նկատմամբ, ապա օրենսդիրն ավելի խիստ

պատասխանատվություն է սահմանում, քան այն դեպքերում, երբ ոտնձգությունը կատարվել է 12 տարին չլրացած անձի նկատմամբ, քանի որ վերջինիս հանդեպ ոտնձգությունը, ըստ ներկայացված կանոնակարգման՝ պետք է դիտարկվի որպես հասարակ հանցակազմով հանցագործություն: Նման մոտեցումը որևէ կերպ արդարացված չէ, և օրենսդիրը որպես առավել ծանրացնող հանգամանք պարզապես պետք է դիտարկեր սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարումը 14 տարին չլրացած անձի նկատմամբ: Ընդ որում, ծանրացնող հանգամանքների ձևակերպման ժամանակ տեղ գտած նշված թերությունն առկա է նաև անչափահասների հանդեպ կատարվող սեռական հանցագործությունների մյուս դրսևորումների նկարագրման ժամանակ:

Ինչ վերաբերում է մերձավոր ազգականների կողմից երեխայի հանդեպ սեքսուալ ոտնձգություն կատարելու համար առավել խիստ պատասխանատվության սահմանմանը, ապա դա բխում է երեխաների հանդեպ սեռական ընտանեկան բռնության կանխարգելման անհրաժեշտությունից: ՄԻԵԴ-ը մի շարք գործերով՝ Զ-ն և այլոք ընդդեմ Մեծ Բրիտանիայի, Ե-ն և այլոք ընդդեմ Մեծ Բրիտանիայի, Ե.-ն, Ս-ն և այլոք ընդդեմ Սլովակիայի, Դ.-ն, Մ.-ն, Դ.-ն ընդդեմ Ռումինիայի, արձանագրել է, որ երեխաների բռնությունն առավելապես կատարվել է ընտանիքի անդամի կողմից:

Լանցարոտեի կոնվենցիայի դրույթներին համահունչ՝ անչափահասների հանդեպ սեքսուալ բռնության համար պատասխանատվություն սահմանված է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածում, որը պատասխանատվություն է սահմանում անձին, այդ թվում՝ անչափահասին, սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարել հարկադրելուն շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածություն օգտագործելով, եթե բացակայում են սույն օրենսգրքի թրաֆիքինգի հանցագործությունների հատկանիշները:

ՀՀ քրեական օրենսդրությունը, Լանցարոտեի կոնվենցիայի պահանջներին համահունչ, քրեական պատասխանատվություն է նախատեսում նաև տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռա-

կան հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար՝ բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում: Հարկ է նշել, որ Լանցարտտեի կոնվենցիայի համաձայն՝ քննարկվող հանցակազմը բացակայում է, եթե անչափահասների, այդ թվում՝ ազգային օրենսդրությամբ սեքսուալ բնույթի գործողությունների համար համապատասխան տարիքի չհասած անձանց միջև փոխադարձ համաձայնությամբ են կատարվում սեռական բնույթի գործողություններ: ՀՀ-ում, սակայն, նման տարիք սահմանված չէ, պարզապես ՀՀ քրեական օրենսդրության վերլուծությունից հետևում է, որ 12 տարեկանից ցածր տարիքային խմբի ներկայացուցչի հետ նույնիսկ նրա համաձայնության դեպքում 14 տարին լրացած անձի սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունը պատժելի է:

Լանցարտտեի կոնվենցիայի համաձայն՝ քրեականացման ենթակա է նաև երեխաների սեռական այլասերումը՝ սեռական հարաբերության տարիքին չհասած երեխային սեռական նպատակներով սեռական բնույթի բռնությանը կամ սեքսուալ բնույթի գործողություններին ականատես լինելուն դիտավորյալ դրդելը՝ նույնիսկ առանց դրանց մասնակցելու, որը ՀՀ գործող քրեական օրենսգրքում առավելապես արտացոլված է անառակաբարո գործողությունների հանցակազմում:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում անառակաբարո գործողությունների՝ տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կամ տասնվեց տարին լրացած անձի կողմից տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու համար:

Այնուհանդերձ, գործող քրեական օրենսգիրքը չի հստակեցնում, թե ինչ պետք է հասկանալ անառակաբարո գործողությունների ներքո: Այս առումով առավել հետևողական է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 201-րդ հոդվածը, որն անառակաբարո արարքի կատարում է դիտում 18 տարին լրացած անձի կողմից պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ տեսաֆիլմի նյութ, էլեկտրոնային կրիչի վրա պահվող նյութ, պատկեր կամ

պոռնկագրական բնույթի այլ առարկա 16 տարին չլրացած անձանց շրջանում տարածելը, ցուցադրելը, 16 տարին չլրացած անձի ներկայությամբ սեռական հարաբերությունը, մերկանալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություն կատարելը, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի զրույցը կամ 16 տարին չլրացած անձի մեջ սեքսուալ բնույթի ցանկություն առաջացնելուն ուղղված այլ արարքը, եթե բացակայում են սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, դրանց հարկադրելու կամ 16 տարին չլրացած անձի նկատմամբ սեքսուալ գործողություններ կատարելու հանցակազմերը:

Գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ անատակաբարո գործողությունների համար առավել խիստ պատասխանատվություն սահմանված է, եթե արարքը կատարվել է՝

- 1 տասնվեց տարին լրացած անձի կողմից՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 2 քսանմեկ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ,
- 3 տասնութ տարին լրացած անձի կողմից տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ,
- 4 միննույն անձի նկատմամբ՝ պարբերաբար,
- 5 մի խումբ անձանց կողմից,
- 6 էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ՝

Ամենախիստ պատասխանատվությունն սահմանված է այն արարքի համար, որը կատարվել է՝

- 1 տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն,
- 2 տասներկու տարին չլրացած անձի նկատմամբ:

Լանցարոտեի կոնվենցիայի համաձայն՝ պատժելի են նաև սեռական հարաբերությունների առաջարկություն անելը երեխաներին, այն է՝ միտումնավոր կեր-

պով չափահաս անձի կողմից՝ սահմանված տարիքը չլրացած երեխային տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով հանդիպման առաջարկությունը, նրա նկատմամբ սեքսուալ բնույթի հանցագործություն կատարելու նպատակով, երբ նման առաջարկությանը հետևել են գործնական քայլեր հանդիպումն իրականացնելու համար:

Լանցարտեի կոնվենցիայի այս պահանջը գործող քրեական օրենսգրքում կարգավորված չէ, մինչդեռ 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածում այն տեղ է գտել՝ քրեական պատասխանատվություն սահմանելով տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձին հանդիպում առաջարկելու և հանդիպմանն ուղղված գործողություն կատարելու համար՝ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքները բավարարելու, կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու կամ արտադրելու նպատակով, եթե բացակայում են թրաֆիքինգի կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, անատակարարո արարքի կատարման, սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու կամ 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ հարաբերություն ունենալու հանցակազմերի հատկանիշները:

Անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունների հաջորդ խումբը կապվում է երեխայի շահագործման և պոռնկության հետ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում

Ծանոթացեք գրումիևգի հանցակազմին:

շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելու կամ շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու համար: Ի տարբերություն չափահասների թրաֆիքինգի՝ օրենսդիրը չի պահանջում, որ այս արարքները լինեն կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելու կամ տուժողին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով:

Ընդ որում, եթե շահագործման ընթացքում երեխան կատարել է հանցանք, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:

Համանման կարգավորում պարունակում է նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածը՝ երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը:

Հանցագործությունների հաջորդ խումբը կապվում է մանկական մարմնավաճառության հետ, այն է՝ քրեական պատասխանատվություն է սահմանվում միտումնավոր գործողությունների համար, որոնք դրսևորվում են՝

- 1 մարմնավաճառությամբ զբաղվելու մեջ երեխային ներգրավելով կամ նրան մարմնավաճառությամբ զբաղվելուն դրդելով,
- 2 երեխային հարկադրելով զբաղվել մարմնավաճառությամբ կամ դրանից օգուտ քաղելով կամ այդ նպատակով երեխային այլ կերպ շահագործելով,
- 3 մանկական մարմնավաճառության ծառայություններից օգտվելով:

«Մարմնավաճառություն» եզրույթը նշանակում է երեխային սեռական բնույթի գործողությունների համար օգտագործելը, երբ վճարում են կամ խոստանում ցանկացած այլ վարձատրություն կամ վճար, անկախ այն բանից, թե այդ վարձատրությունը կամ վճարը կամ էլ նման խոստումը տրվում է հենց երեխային, թե մի երրորդ անձի:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 132.3-րդ, ինչպես նաև 2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածը պատասխանատվություն են սահմանում շահագործման վիճակում գտնվող մարդու, այդ թվում՝ անչափահասի ծառայությունից օգտվելու համար, եթե ծառայությունից օգտվողը գիտակցել է մարդու շահագործման վիճակում գտնվելու հանգամանքը, և բացակայում են թրաֆիքինգի կամ շահագործման հանցակազմերի հատկանիշները: Այս հոդվածներով մասնակիորեն է կարգավորվում մանկական մարմնավաճառության ծառայություններից օգտվելու համար քրեական պատասխանատվության սահմանման՝ Լանցարոտեի կոնվենցիայով նախատեսված պահանջը, քանի որ կարգավորումը վերաբերում է միայն շահագործման վիճակում գտնվող երեխայի ծառայություններից, այդ թվում՝ մարմնավաճառության ծառայություններից օգտվելու համար, մինչդեռ դեռևս չկարգավորված են մնում այն իրավիճակները, երբ երեխան իր կամքով է մարմնավաճառությամբ զբաղվում և «հաճախորդը» օգտվում է նրա ծառայություններից՝ գիտակցելով, որ գործ ունի անչափահասի հետ:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար, եթե բացակայում են շահա-

Համեմատեք ՀՀ նոր քրեական օրենսգրքում տրված «երեխայի պոռնկություն» հասկացության հետ:

գործման հանցակազմի հատկանիշները: Առավել խիստ պատասխանատվություն օրենսդիրը նախատեսում է նույն արարքի համար, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն: Հիշյալ իրավանորմի շրջանակներում օրենսդիրը կանոնակարգել է Լանցարտոնի կոնվենցիայով նախատեսված՝ մարմնավաճառությամբ զբաղվելու մեջ երեխային ներգրավելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու պահանջը, սակայն հստակ քրեականացված չեն մարմնավաճառությամբ զբաղվելուն դրդելու կամ երեխային մարմնավաճառությամբ զբաղվելուն հարկադրելու այն իրավիճակները, որոնք ընդգրկված չեն երեխաների շահագործման համար քրեական պատասխանատվություն սահմանող հոդվածի շրջանակներում:

Ծանոթացեք քրեականացված նոր արարքի հետ:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի 239-րդ հոդվածի շրջանակներում արդեն պատասխանատվություն է նախատեսվել ոչ միայն երեխային պոռնկության ներգրավելու, այլև դրան հակելու համար:

«Պոռնկություն» եզրույթի բացահայտումը ևս կարևոր նշանակություն ունի երեխաների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունների կանխարգելման առումով: Այս հարցին անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ Հակոբ Ավետիսյանի վերաբերյալ և Վարդան Հարությունյանի վերաբերյալ գործերը քննելիս և սահմանել, որ՝ «...պոռնկության դեպքում սեքսուալ բնույթի ծառայությունները մատուցվում են վարձատրության դիմաց, ինչի վերաբերյալ, որպես կանոն, ձեռք է բերվում նախնական պայմանավորվածություն: Այլ կերպ՝ նյութական օգուտ ստանալը պոռնկության էությունն արտացոլող պարտադիր հատկանիշ է, և հենց նյութական հատուցման հանգամանքն է թույլ տալիս պոռնկությունը տա-

րանջատել արտաամուսնական այլ հարաբերություններից...»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «...պոռնկությունը պետք է լայն իմաստով մեկնաբանվի՝ ներառելով նաև անորոշ շրջանակի անձանց սեռական կրքերին հագուրդ տալուն ուղղված ցանկացած սեքսուալ բնույթի գործողությունների կատարումը» (6): Վճռաբեկ դատարանը փաստացի արձանագրել է, որ պոռնկությունը չպետք է սահմանափակվի միայն սեռական հարաբերությամբ կամ սեքսուալ բնույթի գործողությունների կատարմամբ, այլ կարող է ներառել նաև սեռական կրքերին հագուրդ տալուն ուղղված ցանկացած այլ սեքսուալ բնույթի գործողությունը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 262-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում նաև պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելու, ղեկավարելու կամ պահելու կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելու կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելու կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելու համար, եթե բացակայում են շահագործման հանցակազմի հատկանիշները:

Անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ հանցագործությունների հաջորդ խումբը կապված է մանկական պոռնոգրաֆիայի հետ: Մասնավորապես՝ Լանցարոտեի կոնվենցիայով հանցավոր են դիտվում այն միտումնավոր գործողությունները, որոնք դրսևորվում են՝

- 1 մանկական պոռնոգրաֆիայի արտադրությամբ,
- 2 մանկական պոռնոգրաֆիայի առաջարկով կամ տրամադրմամբ,
- 3 մանկական պոռնոգրաֆիայի տարածմամբ կամ փոխանցելով,
- 4 մանկական պոռնոգրաֆիայի ձեռքբերումով իր կամ մեկ այլ անձի համար,
- 5 մանկական պոռնոգրաֆիա ունենալով,
- 6 տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով միտումնավոր կերպով մանկական պոռնոգրաֆիա մուտք ստանալով:

«Պոռնոգրաֆիա» տերմինը նշանակում է այն ամենը, որտեղ երեխան պատկերված է բացահայտ սեռական բնույթի իրական կամ ձևացյալ գործողություններ

կատարելիս, կամ երեխայի սեռական օրգանների ցանկացած ցուցադրում՝ գլխավորապես սեռական նպատակներով:

Ընդ որում, այս հանցակազմն առկա չէ, եթե պոռնոգրաֆիկ նյութն իրենից ներկայացնում են բացառապես մոդելավորված կամ գոյություն չունեցող երեխայի իրական պատկերներ, կամ ներկայացնում է փոխադարձ համաձայնությամբ նույն տարիքի հասած երեխաների պատկերներ, եթե նման նկարահանումները կատարվում և պահվում են նրանց մոտ, նրանց համաձայնությամբ և բացառապես նրանց սեփական անձնական օգտագործման համար: Հարկ է նշել, որ Լանցարոտեի կոնվենցիայով արտահայտված այս դիրքորոշումը վերաբերում է բացառապես երեխաներին և որևէ կերպ չի տարածվում չափահասների վրա: Օրինակ, Սյոդերմանս ընդդեմ Շվեդիայի գործով հայրը նկարահանել էր մերկ դասերը և ՄԻԵԴ-ն արձանագրեց ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի խախտում:

Լանցարոտեի կոնվենցիայի համաձայն՝ երեխաների նկատմամբ կատարվող սեքսուալ հանցանքների թվին են դասվում այն միտումնավոր գործողությունները, որոնք դրսևորվում են՝

- 1 պոռնոգրաֆիկ ներկայացումների մեջ երեխային ներգրավելով կամ նրան դրդելով մասնակցել նման ներկայացումներին,
- 2 երեխային հարկադրելով մասնակցել պոռնոգրաֆիկ ներկայացումներին կամ դրանից օգուտ քաղելը կամ այդ նպատակներով երեխային այլ կերպ շահագործելով,
- 3 երեխաների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ ներկայացումներին գիտակցաբար ներկայանալով:

Լանցարոտեի կոնվենցիայի պահանջները մասնակիորեն բավարարված են ՀՀ գործող քրեական օրենսգրքի տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար, ինչպես նաև երեխաների շահագործման համար պատասխանատվություն սահմանող նորմերով:

Քննարկվող արարքները մասնակիորեն տեղ են գտել նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածում, որի 1-ին մասը պատասխանատվություն է սահ-

մանում պոռնկագրական նյութեր կամ առարկաներ, այդ թվում՝ տպագիր հրատարակություններ, կինոյի և տեսաֆիլմերի նյութեր, պատկերներ կամ պոռնկագրական բնույթի այլ առարկաներ տարածելու, գովազդելու, իրացնելու, ինչպես նաև այդ նպատակով պատրաստելու համար, եթե բացակայում են թրաֆիքինգի կամ շահագործման հանցակազմերի հատկանիշները: Նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիայի ներկայացնելու կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիայի պահպանելու համար: Այուհանդերձ, ՀՀ գործող քրեական օրենսգրքում պատասխանատվություն նախատեսված չէ, օրինակ, երեխաների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ ներկայացումներին գիտակցաբար ներկայանալու համար:


2021թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքին առավել հետևողական մոտեցում է դրսևորել անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունները քրեականացնելու առումով, օրինակ՝ 300-րդ հոդվածի 2-րդ մասում պատասխանատվություն սահմանելով այնպիսի արարքների համար, ինչպիսիք են՝

մանկական պոռնոգրաֆիա ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը, տարածելը, իրացնելը, արտահանելը, ներմուծելը, առաջարկելը, գովազդելը, մատչելի դարձնելը, տնօրինելը, տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հասանելիություն ձեռք բերելը կամ համակարգչում, համակարգչային համակարգում, համակարգչային ցանցում կամ համակարգչային այլ սարքավորումների վրա կամ ցանկացած այլ եղանակով մանկական պոռնոգրաֆիա պահպանելը կամ մանկական պոռնոգրաֆիա դիտելը:

Երեխաների դեմ կատարվող սեքսուալ ոտնձգությունների, ինչպես նաև ընտանիքում բռնության գործերի քննության ժամանակ կարևոր նշա-

Ծանոթացեք օրենսդրական լրացումների հետ:

նակություն ունի վաղեմության ժամկետների հաշվարկման խնդիրը, հատկապես նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ այս հանցագործությունների տուժողները հաճախ բավարար քաջություն չեն ունենում կատարվածի մասին հայտնելու, իսկ սեքսուալ ոտնձգությունները բարձր լատենտայնություն ունեցող հանցանքներ են: Հենց դա հաշվի առնելով՝ թե՛ գործող քրեական օրենսգրքում և թե՛ նոր քրեական օրենսգրքում ամրագրում ստացավ այն, որ սեքսուալ հանցագործությունների առանձին տեսակների պարագայում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է հանցագործությունից տուժած անձի 18 տարին լրանալուց հետո:



- 1 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (ընդունված 20.11.1989, ՀՀ-ն վավերացրել է 22.06.1993),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 2 Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին ԵԽ կոնվենցիա (ընդունվել է 25.10.2007, ՀՀ-ն վավերացրել է 01.01.2021),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152921>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 3 Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, 2005թ., CETS թիվ 197,
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=75324>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 4 Կիրենհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, 2001, ETS թիվ 185,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48028>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)
- 5 ՀՀ նոր քրեական օրենսգիրք (ընդունված 05.05.2021, ուժի մեջ է մտնելու 01.07.2022),
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080>
(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

6 Հակոբ Ավետիսյանի վերաբերյալ ԵԱԲԴ/0217/01/16 քրեական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14918173765747042

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.);

Վարդան Հարությունյանի վերաբերյալ ԵՇԴ/0041/01/14 քրեական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում,

http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=16044073672539329

(վերջին անգամ դիտվել է 19.01.2022թ.)

ԲԱՌԱՐԱՆ



Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 10 րոպե:

ԲՈՆՈՒԹՅՈՒՆ — Այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով՝ դիտավորյալ ֆիզիկական կամ հոգեբանական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական կամ հոգեբանական վնաս պատճառելն է:

ԵՐԵԽԱՅԻ ՊՈՌՆԿՈՒԹՅՈՒՆ — Երեխային սեքսուալ բնույթի գործողությունների համար օգտագործելն է վարձատրության, այլ հատուցման կամ դրանց խոստման դիմաց՝ անկախ այդ վարձատրությունը, այլ հատուցումը կամ խոստումը երեխային կամ երրորդ անձին տրամադրելու հանգամանքից:

ՀԱՆՑԱՆՔԻ ԼԱՏԵՆՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ — Հանցավորության պաշտոնական վիճակագրության մեջ հանցագործության՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոնների հետևանքով արտացոլում չգտնելն է:

ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ — Այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերն են, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ — Երեխայի նկատմամբ սեքսուալ բնույթի գործողություններն են՝ վերջինիս խոցելիությունը, կախյալությունը կամ վստահությունն օգտագործելով:

ՄԵՌԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ — Մեկ անձի կողմից մյուսի նկատմամբ սեքսուալ ոտնձգությունն է՝ բռնություն գործադրելով կամ սպառնալիքով:

ՎԻՃԱԿԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆ — Վիճակ է, որում հայտնված անձը չունի իր համար ընդունելի այլընտրանք, քան ենթարկվել իր նկատմամբ կատարվող չարաշահմանը: